ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 08.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/80

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.11.2017թ. թիվ 03/26-3/21816-17 գրությամբ Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանին և «ՖՕՌՏ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.11.2017թ. թիվ ԴՎԱ/4249 գրության հիման վրա, 28.11.2017թ. թիվ 03/26-3/21816-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանին և «ՖՕՌՏ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանը 30.11.2017թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստը գնահատող հանձնաժողովի կողմից հրավիրվել է 23.10.2017թ. ժամը 11:00-ին և կազմվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությունը:

Այնուհետև՝ 23.10.2017թ. նույն ժամը 11:00-ին «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հրավիրել է գնահատող հանձնաժողովի մեկ այլ նիստ և այս անգամ կազմել 23.10.2017թ. ժամը 11:00 նիստի արդեն թիվ 3 արձանագրությունը:

Գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00 նիստի թիվ 3 արձանագրության 4.2. կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Նույն 3-րդ արձանագրության 6.1. կետի համաձայն՝ որոշվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման 23.10.2017թ. ժամը 11:00 նիստի թիվ 2 արձանագրությունը (նաև նույն օրվա թիվ 3 արձանագրությունը) հրապարակվել է տեղեկագրում միայն 13.11.2017թ., այն է՝ հայտերի բացման նիստից ավելի քան 20 օր հետո:

Ավելին, անգամ www.oldgnumner.am կայքում հրապարակված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի, ինչպես նաև հայտերի գնահատման նիստի արձանագրությունը հրապարակվել են սխալ ծածկագրի տակ, ինչն անհնարին էր դարձնում նշված արձանագրության որոնումը պաշտոնական տեղեկագրում: Մասնավորապես՝ www.oldgnumner.am կայքում հրապարակվել է ոչ թե «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրությունը, այլ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրությունը, սակայն որպես տեքստ կցվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգին վերաբերող նյութեր:

Այսինքն միտումնավոր, թե թերացմամբ www.oldgnumner.am կայքում հայտերի բացման նիստից ավելի քան քսան օր հետո հրապարակվել է սխալ նշված ծածկագրով հայտերի բացման նիստի արձանագրություն:

Վերոհիշյալի արդյունքում Ընթացակարգով շահագրգռված ցանկացած անձ զրկվել է հայտերի բացման նիստի արդյունքի վերաբերյալ որևէ տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, այդ թվում նաև՝ իր կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հնարավորությունից:

Բացի այդ, նույն 3-րդ արձանագրության 6.1. կետով գնահատող հանձաժողովի կայացրած որոշմամբ նաև չի նշվել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովին ներկայացնելու հստակ վերջնաժամկետ, այլ ընդամենը վերացական նշվել է գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11:00-ն:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 33-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ մասի համաձայն՝

3. Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

1) տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3)տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

7) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

8) գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

9) տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

10) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

8. Հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն 8-րդ և 9-րդ մասերի համաձայն՝

8. Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

9. Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի

արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում.

Ընկերությունը հայտնել է, որ վերոհիշյալ իրավական նորմերի և առկա փաստաթղթերի ու փաստերի համադրությունից հետևում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել վկայակոչված նորմերի մի շարք խախտումներ, մասնավորապես.

1. Նույն օրը՝ 23.10.2017թ., նույն ժամին՝ ժամը 11:00-ին, հրավիրվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի երկու նիստ, որի վերաբերյալ կազմվել է երկու արձանագրություն՝ թիվ 2 և թիվ 3:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի հայտերի բացման 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի արձանագրությունը տեղեկագրում հրապարակվել է քսան օր անց՝ 13.11.2017թ:

3. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի հայտերի բացման 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի արձանագրությունը հրապարակվել է հին տեղեկագրում:

4. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի հայտերի բացման 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի արձանագրությունը տեղեկագրում հրապարակվել է սխալ ծածկագրի տակ, նշվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՊՁԲ-4/1» ծածկագիրը:

5. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի հայտերի բացման 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի արձանագրությունը չի պարունակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով պահանջվող տեղեկատվությունը:

6. Հայտերի գնահատումը կատարվել է ավելի քան քսան օր:

7. Թիվ 3 արձանագրության 6.1. կետով գնահատող հանձնաժողովի կայացրած որոշմամբ նաև չի նշվել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովին ներկայացնելու հստակ վերջնաժամկետի ամսաթիվ, այլ ընդամենը վերացական նշվել է գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11:00-ն:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից վերոհիշյալ ընթացակարգի վերաբերյալ 20.11.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին էր ներկայացվել բողոք՝

Շուշանիկ Հովսեփյանի կողմից (ԳԲԽ-ԱՄ-2017/43), որի մեջ ներկայացվել էր ՀՀ պաշտպանության նախարարության կողմից թույլ տված վերը թվարկված խախտումները:

Տվյալ բողոքով Շուշանիկ Հովսեփյանը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել էր.

1. Դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստերի թիվ 2 և 3 արձանագրությունները և դրանցից բխող գնահատող հանձնաժողովի կողմից կայացված այլ որոշումները:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը հիմնավոր էր համարել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին Շուշանիկ Հովսեփյանի կողմից 20.11.2017թ. ներկայացրած բողոքի փաստարկները և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 27.11.2017թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 որոշմամբ բողոքը բավարարվել է մասնակի, այն է՝ դադարեցվել էր ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստերի թիվ 2 և 3 արձանագրությունները և դրանցից բխող գնահատող հանձնաժողովի կողմից կայացված այլ որոշումները:

Այսպիսով, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.2. կետով առաջարկել էր ներկայացնելու հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը: Սակայն, ինչպես արդեն նշվել է, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 27.11.2017թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 որոշմամբ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությունը և դրանցից բխող գնահատող հանձնաժողովի կողմից կայացված այլ որոշումները դադերեցվել են: Ուստի դադարեցվել է թե Սանասար Ավագի Մուրադյան Ա/Ձ-ից որակավորման չափանիշները

հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը պահանջելու մասին որոշումը և թե վերջինիս հայտը մերժվելու մասին որոշումները:

Վերոհիշյալից բխում է, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 27.11.2017թ. կայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 որոշմամբ դադարեցվել են գնահատող հանձնաժողովի այն որոշումները, որոնք ըստ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.11.2017թ. թիվ ԴՎԱ/4249 գրության, հիմք են հանդիսանում Սանասար Մուրադյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, ուստի և վերացել են Սանասար Մուրադյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանը խնդրել է հիմք ընդունել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 27.11.2017թ. կայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 որոշումը և Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 01.12.2017թ. ժամը 11:40-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «ՖՕՌՏ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը կարծիք ստանալու նպատակով 29.11.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/21856-17 գրությամբ, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով դիմել է «ՖՕՌՏ» ՓԲԸ-ին:

Խորհրդի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «ՖՕՌՏ» ՓԲԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«ՖՕՌՏ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 01.12.2017թ. ժամը 11:40-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 24.11.2017թ. թիվ ԴՎԱ/4249 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 13.11.2017թ. Ընթացակարգի 15-18-րդ, 124-րդ, 130-րդ, 152-րդ, 162-րդ, 219-րդ և 220-րդ չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանը, որին ծանուցվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) չեն ներկայացվել վերը նշված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանի հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 01.12.2017թ. ժամը 11:40-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>5. ՍՑ-ԱՄ-2017/80 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/80 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բեռնատար մեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանի և «ՖՕՌՏ» ՓԲԸ-ի կոնսորցիումը հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանի և «ՖՕՌՏ» ՓԲԸ-ի կոնսորցիումը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 15-18-րդ, 130-րդ, 152-րդ, 162-րդ, 219-րդ և 220-րդ չափաբաժինների մասով և նույն արձանագրության 4.2-րդ կետով որոշվել է վերջիններիս ծանուցել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ (ծանուցումն ուղարկվել է 13.11.2017թ.):

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.11.2017թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանի և «ՖՕՌՏ» ՓԲԸ-ի կոնսորցիումի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ վերջիններիս կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

4. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը Շուշանիկ Հովսեփյանի կողմից 20.11.2017թ. ներկայացված բողոքի շրջանակներում 27.11.2017թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 որոշմամբ դադարեցնել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստերի թիվ 2 և 3 արձանագրությունները և դրանցից բխող գնահատող հանձնաժողովի կողմից կայացված այլ որոշումները:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.11.2017թ. թիվ 03/26-3/21816-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.11.2017թ. թիվ ԴՎԱ/4249 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Նույն հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բեռնատար մեքենաների պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթ, որի հայտերի բացման նիստը նշանակվել է 23.10.2017թ. ժամը 11:00-ին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 23.10.2017թ. ժամը 11:00-ին կազմվել են հայտերի բացման թիվ 2 և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանի և «ՖՕՌՏ» ՓԲԸ-ի կոնսորցիումը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 15-18-րդ, 130-րդ, 152-րդ, 162-րդ, 219-րդ և 220-րդ չափաբաժինների մասով և նույն արձանագրության 4.2-րդ կետով որոշվել է վերջիններիս ծանուցել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ (ծանուցումն ուղարկվել է 13.11.2017թ.):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.11.2017թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանի և «ՖՕՌՏ» ՓԲԸ-ի կոնսորցիումի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ վերջիններիս կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Միևնույն ժամանակ Շուշանիկ Հովսեփյանը 20.11.2017թ. բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին՝ վիճարկելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ին հայտերի բացման թիվ 2 և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունները:

Շուշանիկ Հովսեփյանը 20.11.2017թ. բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է

1. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությունը համապատասխանեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին և շտկված արձանագրությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ճիշտ ծածկագրով հրապարակել տեղեկագրում:

2. Որպես հետևանք՝ դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 4.2 կետով կայացրած որոշումը, այն է՝ մասնակիցներից հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ, ինչպես նաև նույն արձանագրության 6.1 կետով կայացրած որոշումը:

3. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ ներկայացնելու գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

4. 1-3 կետերի պահանջները ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից չբավարարվելու դեպքում՝ թույլ տրված խախտումների հիմքով պարտավորեցնել ՀՀ ՊՆ-ին չկայացած հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 27.11.2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 որոշմամբ որոշել է Շուշանիկ Հովսեփյանի բողոքը բավարարել մասնակի և դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստերի թիվ 2 և 3 արձանագրությունները և դրանցից բխող գնահատող հանձնաժողովի կողմից կայացված այլ որոշումները:

Խորհուրդը 27.11.2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 որոշմամբ արձանագրել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի պահպանել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի և 8-րդ մասի, Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության և 43-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ պարբերությունը սահմանում է, որ Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 27.11.2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/43 որոշմամբ դադարեցվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց մրցույթի 23.10.2017թ. ժամը 11:00-ի նիստի հայտերի բացման թիվ 2 արձանագրությունը և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը և դրանց հիման վրա կայացված՝ ընթացակարգի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր պահանջելու, ինչպես նաև նշված որոշումներից բխող Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված այլ որոշումները, այդ թվում նաև՝ մասնակցի հայտը մերժելու մասին, ուստի Խորհուրդը գտնում է, որ վերը նշված որոշմամբ վերացել են Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանին և «ՖՕՌՏ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ուստի հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանին և «ՖՕՌՏ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.11.2017թ. թիվ 03/26-3/21816-17 գրությամբ Ա/Ձ Սանասար Ավագի Մուրադյանին (ՀՎՀՀ՝ 25368534) և «ՖՕՌՏ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 7823001161) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**